Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015 թվականի հունվարի 15-ի ՀՀ Կառավարության նիստով հաստատվել է Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների Մարզային զարգացման ծրագիրը: Այն իր կառուցվածքով համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, աղքատության հաղթահարման ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին: Մարզային զարգացման ծրագիրը կնպաստի Վայոց ձորի համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ Վայոց ձորի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը:

2015 թվին տարեկան աշխատանքային պլանով զարգացման ծրագրերի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները նախատեսվել է ավելի քան 11 մլրդ դրամ, որից՝ պետ. բյուջե - 194 մլն դրամ, դոնոր կազմակերպությունների միջոցով – 1 800 մլն դրամ, այլ աղբյուրներով – 9 100 մլն դրամ:

2015 թվականի հուլիս ամսվա դրությամբ իրականացվել են 2.3 մլրդ դրամի զարգացման ծրագրեր: 2015թ. առաջին կիսամյակում Վայոց ձորի մարզում, ըստ արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 7.58 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 7.8 մլրդ. դրամի արտադրանք: Աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 5.1 % :

Հիմնականում աճը ապահովվել է Եղեգնաձոր քաղաքում վերագործարկված պահածոների գործարանի, էլ. էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով:

Զգալի աճել է զբոսաշրջիկներիթիվը հաշվետու ժամանակաշրջանում հասնելով 19000-ի: Աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 20.2 % :

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողմանի քայլեր են կատարվել արտաքին հարաբերություններում՝ մասնավորապես 2015 թվականի մայիս ամսին Վայոց ձորի պատվիրակությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզի միջև 19.04.2011 թվականին ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում Համագործակցության համաձայնագրի շրջանակում պաշտոնական այցով Նիժնի Նովգորոդի մարզում էր:

Ներկայացվեց Համագործակցության համաձայնագրի շրջանակներում կատարված աշխատանքները և տնտեսական, մշակութային, գիտական ոլոտներում

համագործակցության հետագա զարգացումների հնարավորությունները ու հեռանկարները:

Քննարկվեցին Նիժնի Նովգորոդի և Վայոց ձորի մարզերի տնտեսական հնարավորությունները և ներուժը, գյուղատնտեսական արտադրանքի արտահանման հետ կապված հիմնախնդիրներ՝ համագործակցության հետագա քայլերի արդյունավետ իրականացման նպատակով:

համաձայնագրի 2015-2017թթ. միջոցառումների իրականացման ծրագրի շրջանակներում ապրիլ ամսին Մալիշկայի երկրորդ դպրոցի 10 աշակերտները խմբի ղեկավարի ուղեկցությամբ, գտնվում էին Արխանգելսկի մարզում: Հունիսին փոխադարձ այցով Վայոց ձորի մարզում են Արխանգելսկի մարզի մանկատան թվով 10 երեխաներ՝ խմբի ղեկավարի ուղեկցությամբ:

Վայոց ձորի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության միջև հունիսին ստորագրվել է Հուշագիր, ըստ որի՝ երկու հարևան երկրների բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման համար ընդլայնում են տնտեսական, մշակութային, մարզական համագործակցությունը, հիմք ընդունելով՝ 05.11.2010 թվականին Խոյ քաղաքում կնքված հուշագրի 9-րդ նիստի 1, 2, 6, կետերի պահանջները:

Կողմերը համաձայնվում են փոխադարձ համագործակցության շարունակմանը նախկինում ստորագրված Հուշագրի հետևյալ կետերով.

1. Կողմերի միջև նախկինում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Պայմանավորվող կողմերը գործնականում կիրառելի կդարձնեն մարզական և տուրիստական խմբերի փոխադարձ այցելությունները:
2. Նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար, հարաբերությունների առավել զարգացման նպատակով, կողմերն օժանդակելու են մասնագիտական խմբերի ստեղծմանը և տնտեսական, առևտրային և մշակութային ոլորտներում համատեղ քննարկումներ կազմակերպելուն, քննարկումներին մասնակից դարձնելով մասնավոր սեկտորի ակտիվ տնտեսվարողներին